

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Հաշվի առնելով, որ Միսիանի համայնքի Միսական 41 հասցեի վարչական շենքը հանդիսանում է համայնքի սեփականություն, ուստի առաջարկում եմ 3-րդ հարկից 17.87 քմ (1 սենյակ) մակերեսով տարածքը, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրվել «Հասարակության Ձայն» բնապահպանական սոցյալական հասարակական կազմակերպությանը, որպեսզի ապահովենք ս/թ ապրիլի 9-ին «Հասարակության Ձայն» բնապահպանական սոցյալական հասարակական կազմակերպության և Բնության Համաշխարհային հիմնադրամի միջև կնքված դրամաշնորհային պայմանագրի շրջանակներում ծրագրի պատշաճ իրականացումը:

Նշված գործառույթը համայնքապետարանին կբերի ֆինանսական եկամուտ, որը կնպատակաուղղվի համայնքի հետագա ծրագրերի իրականացմանը:

Համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության  
և տնտեսության ոլորտը համակարգող բաժնի պետ՝



Ս.Հովհաննիսյան

## ՏԵՂԵԿԱՆՔ

Միսիանի համայնքի ավագանու որոշման նախագծի հաստատումից հետո, համայնքային բյուջեի ծախսային մասում փոփոխություն չի կատարվի:

Համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության  
և տնտեսության ոլորտը համակարգող բաժնի պետ՝



Ս.Հովհաննիսյան